Visa Digital Քարտի տրամադրման և սպասարկման սակագներ

Ծառայության տեսակ	Սակագին
1. Քարտային հաշվի սպասարկման միջնորդավճար	2 000 ՀՀ դրամ տարեկան
2. Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%
3. Հաշվի գերածախսի դիմաց գանձվող տարեկան տոկոսադրույք	21.5 %
4. Վարկային գծի օգտագործման անտոկոս ժամանակահատված	-
5. Ամսական պարտադիր մարումներ	-
6. Լրացուցիչ քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով)	-
7. Կից քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով)	-
8. Քարտային հաշվի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո
9. Քարտի գործողության ժամկետ	24 ամիս
10. Կանխիկ դրամի տրամադրում բանկոմատներում և կանխիկի տրամադրման կետերում՝	
• *ԱԿԲԱ Բանկ (արտարժույթ կանխիկացնելու դեպքում գործում է այդ պահին Բանկում գործող սակագինը, որը հրապարակվում է Բանկի «Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման» սակագներում)*	1 %
• *Այլ բանկեր Հայաստանում*	1 %
• *Այլ բանկեր արտերկրում*	1 % (նվազագույնը 1 500 ՀՀ դրամ)
11. Կանխիկի տրամադրման օրական առավելագույն գումար	▪ 1,000,000 ՀՀ դրամ ▪ 2,000 ԱՄՆ դոլար ▪ 2,000 եվրո
12. Կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակ	5
13. Վճարային գործարքների օրական առավելագույն գումար	▪ 1,000,000 ՀՀ դրամ ▪ 2,000 ԱՄՆ դոլար ▪ 2,000 եվրո
14. ՀՀ տարածքում քարտից քարտ փոխանցումներ առցանց հարթակների, «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով	0.5%
15. Բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումներ[1]	0.2%
16. SMS-տեղեկացում ծառայություն	15 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ (գանձվում է յուրաքանչյուր հաղորդագրության դիմաց)
17. Քարտի փոխարինում (Հայաստանում)	-

Ծանուցումներ

Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի ընթացքում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով տարեկան տոկոսային եկամտաբերությունը բոլոր քարտերի համար կազմում է 0%:

ԱԿԲԱ ԲԱՆԿԻՈՒՄ ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից» հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝

- ✓ միայն դրամային ավանդների դեպքում - 16 մլն ՀՀ դրամ,
- ✓ միայն արտարժութային ավանդի դեպքում - 7 մլն ՀՀ դրամ,
- ✓ և՛ դրամային (7 միլիոնից ավել), և՛ արտարժութային ավանդների դեպքում – միայն դրամային ավանդը՝ մինչև 16 մլն ՀՀ դրամի չափով,
- ✓ և՛ դրամային (7 միլիոնից պակաս), և՛ արտարժութային ավանդների դեպքում - դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 մլն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:

Տոկոսագումարները հաշվարկվում են քարտային հաշվի մնացորդի նկատմամբ, օրական կտրվածքով, քարտի գործողության ողջ ժամկետի համար: Տոկոսագումարի հաշվարկը դադարեցվում է քարտի գործողության ժամկետի ավարտին հաջորդող ամսվա 14-ին կամ հաջորդ աշխատանքային օրը:

Հաշվարկված տոկոսագումարները վճարվում են քարտային հաշվին ամսական կտրվածքով՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

Կանխիկի տրամադրման օրական առավելագույն չափը, մեկ գործարքի առավելագույն սահմանաչափը և կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակը կարող են անվճար փոփոխվել քարտապանի բանավոր հանձնարարությամբ:

Սակագներում օգտագործված տերմինների մեկնաբանություն

- **Անտոկոս ժամանակահատված** - արտոնյալ ժամանակահատված, որի ընթացքում վճարային գործարքների կատարման համար քարտի վարկային միջոցների օգտագործած մասը քարտային հաշվին մուտք անելու դեպքում քարտապանը տոկոսագումարներ չի վճարում:
- **Ամսական պարտադիր մարումներ** - յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ օգտագործված վարկային գծի նշված տոկոսը ենթակա է վճարման այդ ամսվա ավարտից հետո 50 օրվա ընթացքում: Տվյալ ժամկետում նշված պարտավորությունը չկատարելու դեպքում քարտապանը պարտավորվում է բացի պարտադիր մարման ենթակա գումարից վճարել նաև տվյալ պահին քարտային հաշվի սպասարկման համար առաջացած դրամային պարտավորությունը, առաջացած գերածախսը և գերածախսի նկատմամբ հաշվարկված տոկոսները:
- **Լրացուցիչ քարտ** - գործող քարտային հաշվին կցված այլ վճարային համակարգի քարտ: Լրացուցիչ քարտը հնարավորություն է տալիս Քարտապանին օգտագործել հիմնական քարտային հաշվին առկա միջոցները, եթե հիմնական քարտի հետ առաջացել են չմահատեսված խնդիրներ կամ այն չի սպասարկվում տվյալ առևտրի/սպասարկման կետի և/կամ բանկոմատի կողմից: Լրացուցիչ քարտի միջնորդավճարը գանձվում է միանվագ քարտի գործողության ողջ ժամկետի համար բացառությամբ լրացուցիչ American Express Cashback քարտի, որի սպասարկման վարձը գանձվում է ամսական սկզբունքով:
- **Կից քարտ** - գործող քարտային հաշվին կցված միևնույն վճարային համակարգի և տեսակի քարտ: Կից քարտը տրամադրվում է հիմնական քարտի քարտապանի կողմից նշված անձին և հնարավորություն է ընձեռում վերջինիս օգտագործել հիմնական քարտի հաշվին առկա միջոցները կից քարտի դիմումի մեջ նշված սահմանաչափերի շրջանակում: Ցանկացած տեսակի քարտի համար տրամադրվում է առավելագույնը 2 կից քարտ, բացառությամբ American Express Gold (առավելագույնը 4 կից քարտ) և ArCa Business ու Visa Business (անսահմանափակ քանակությամբ կից քարտեր) քարտատեսակների: Կից քարտի միջնորդավճարը գանձվում է միանվագ քարտի գործողության ողջ ժամկետի համար:
- **SMS-տեղեկացում** - քարտի դիմումի մեջ նշված հեռախոսահամարին քարտապանի քարտային հաշվի շարժի վերաբերյալ sms-հաղորդագրության ստացում:

1 Բացի նշված սակագնից Բանկի բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումների դիմաց կիրառվում է նաև սպասարկող բանկի միջնորդավճար՝ 0.3%: Ընդ որում, ՀՀ այլ բանկերի բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումների դեպքում ևս կարող է կիրառվել սպասարկող բանկի միջնորդավճար, որի չափը սահմանվում է տվյալ բանկոմատը սպասարկող բանկի կողմից: